ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 993-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2023 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 993-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի «**Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը, ներկայացվող պահանջները և սպանդից գոյացած մթերքի անասնաբուժական դրոշմման կարգը սահմանելու մասին**» N 993-Ն որոշմամբ սահմանված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ գլխով.

«**V. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍՊԱՆԴԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

40. Բնակավայրերում ժամանակավոր սպանդի տարածքը (շինությունը), որը նախատեսված է փոքրաթիվ (5-7 գլուխ) կենդանիների ամենօրյա սպանդի համար, տեղակայվում է սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից

հատկացված համապատասխան վայրում։

41. Սպանդային տարածքում նախասպանդային և հետսպանդային զննումն իրականացվում է սույն որոշման հավելվածով սահմանված ընթացակարգերով։

42. Սպանդի տարածքը պետք է ունենա՝

- բետոնապատ տարածք՝ (ներառյալ նախասպանդային և կարանտինային տարածք)
- թեքություն արյան և ջրի արտահոսքի համար.
- տանիք.
- ցանկապատ՝ ցանկապատված մետաղական ցանցով կամ թիթեղով։

43. Սպանդային տարածքը պետք է ունենա հետևյալ տեխնոլոգիական հագեցվածությունը՝

- կենդանու զգայազրկման (շշմեցման) և սպանդի հավաքածու՝ կենդանու զգայազրկման սարք և կենդանիների շարժողական ակտիվությունը սահմանափակող սարքավորում (խեկ, խոզ).
- սղոց՝ կրծոսկրը կտրող.
- դանակներ.
- գործիքների ախտազերծման սարք.
- լվացարան.
- կուտակային ջրատաքացուցիչ.
- զննման սեղան՝ անասնաբուժասանիտարական փորձաքննություն անցկացնելու համար
- անասնաբուժասանիտարական փորձաքննության համար նախատեսված միջոցներ.
- ամբարձիչ՝ էլեկտրական.
- նախասպանդային կշեռքներ.
- կշեռք՝ մսեղիքի համար
- ջրի տարա.
- ջրի պոմպ.
- տարա՝ մաքրող լուծույթների համար.
- տարաներ՝ արյան հավաքման, աղիների, կարմիր օրգանների, կաշվի, ստամոքսի.
- կենսաթափոնների հավաքման տարաներ.
- գոմաղբի հավաքման տարա.
- հեղուկների հեռացման համակարգ՝ խողովակ, ընդունիչ տարողություն.
- լվացման և ախտահանման հնարավորություն.
- շարժական պոմպային ախտահանիչ՝ ցողարկող գործիքով.
- թափոնների վնասազերծման և ոչնչացման հնարավորություն.
- սանհանգույց։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։